Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ---------- 2019 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի

N 404-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» N 404-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելված 1-ով սահմանված հիվանդությունների ցանկի 1-ին հոդվածի՝

ա. «բ» կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, մտավոր հետամնացության այլ ձևեր»,

բ. «գ» կետի 2-րդ սյունակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) սոցմանկավարժական բարձիթողի վիճակներ»,

գ. բացատրական մասի երկրորդ և երրորդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««բ» կետին են վերաբերում թեթև աստիճանի մտավոր հետամնացությունները, ինչպես նաև այլ և չճշտված մտավոր հետամնացությունները՝ անկախ վարքի և հարմարվողականության խանգարումների առկայությունից:

«գ» կետին են վերաբերում սոցմանկավարժական բարձիթողի վիճակները: Փորձաքննության ժամանակ նկատի են առնվում օրգանիզմի ֆիզիկական, հոգեկան, ինտելեկտուալ զարգացման հնարավորությունների առկայությունը, հարմարվողականությունը և անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը:».

2) հավելված 2-ով սահմանված՝

ա. հիվանդությունների ցանկի 1-ին սյունակով փորձաքննվողների զինվորական ծառայության սահմանափակումների բնութագրերի աղյուսակի «1գ» տողի 2-րդ սյունակում նշված հակացուցումը հանել,

բ. հիվանդությունների ցանկի 3-րդ սյունակով փորձաքննվողների զինվորական ծառայության սահմանափակումների բնութագրերի աղյուսակի «1գ» տողի 2-րդ և 3-րդ սյունակներում նշված հակացուցումները հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: